

Նախագծային դաս-միջոցառման պլան

Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել,

և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականության:

Առարկա՝ *Մաթեմատիկա, ինֆորմատիկա*

Դասարան՝

Թեմա՝ Անանիա Շիրակացի. խնդիրների լուծում, խրախճանականների ներկայացում

Նպատակ

1. Սովորողի մոտ ձևավորել և զարգացնել. տրամաբանական, լեզվական և ավգործական մտածողություն, գիտելիքների և կարողությունների կիրառելիություն տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:
2. Հայրենաճանաչություն, անհատական և խմբային հետազոտական աշխատանքի ձևավորում:
3. Համագործակցություն (սերտ համագործակցության ապահովում դասավանդող – սովորող – ծնող համակարգում), խնդիրների վերհանում և քննարկում:

Խնդիր

1. Անդրադարձ VII դարի մաթեմատիկոս, աստղագետ Անանիա Շիրակացու գործունեությանը:
2. Սովորողների օնլայն գործիքների օգտագործման կարողությունների զարգացում:

Նախագծային աշխատանքի փուլեր

1. Թեմայի ընտրություն
 - Ենթաթեմաների բաշխում, խմբերի ձևավորում
 - Տեղեկատվության հավաքագրում, մշակում
 - Եզրահանգումների ձևակերպում
 - Հետազոտական հաշվետվության նախապատրաստում
2. Ստեղծել. սահիկաշար, ստենդ և օնլայն գրադարան ու գրել ռեֆերատ

- Կենսագրություն
- Ասույթներ
- Խնդիրներ
- Խրախճանականներ

3. Խնդիրների լուծում, խրախճանականների ներկայացում

4. Արդյունքների ամփոփում

Հիմնական մեթոդներ

- Ուսումնական գործընթաց
- Անցյալի իրականության վերակառուցում
- Դաս-դասախոսություն
- Անհատական և խմբային հետազոտական աշխատանք
- Քննարկում-բանավեճ
- Շնորհանդեսային հրապարակումներ

Ակնկալվող արդյունք

Հայրենաճանաչությանը նպաստող դասընթացի ներառում դպրոցի ուսումնական պլանում: Ենթադրվող դասընթացի բովանդակային նյութերը ստեղծել. դասավանդողի և դպրոցների համագործակցությամբ, իսկ մեթոդաբանական սկզբունքները և հնարքները փորձարկել հիմքում ունենալով. աշակերտակենտրոն, անհատական ու խմբային առաջընթացի պարբերական արձանագրումը: